

**ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱՅԿԱԶ ԱՐՄԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (V-
XII ԴԴ.)**

**Ժ.02.01 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Կ. Խաչատրյան
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ն. Հ. Դիլբարյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. փետրվարի 13-ին՝ ժամը
15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի
նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հունվարի 13-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների

թեկնածու, դոցենտ

Ն.Մ.Մինոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

V-XII դդ. հայ պատմագրության մեջ վկայված ցեղանունների ուսումնասիրության արդիականությունը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ այս շրջանի ցեղանվանական նյութը մինչ օրս չի երևարկվել համապարփակ քննության: Ցեղանվանական նյութի վերհանումն ու դրանց բառակազմական ու իմաստագործառական ուսումնասիրությունը կարող է խթանել ցեղանվանագիտության՝ իբրև բառագիտության մի առանձին բաժնի զարգացումը: Ներկա ատենախոսությունն ըստ էության առաջինն է հայ բանասիրական մտքում, որում հայկական պատմագրական նյութի հիման վրա կատարվում է ցեղանունների ամբողջական ուսումնասիրություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է ներկայացնել V-XII դդ. հայ պատմագրության մեջ վկայված ցեղանվանական հիմնական նյութը, կատարել ցեղանունների բառակազմական ընդհանուր քննություն, բացահայտել ցեղանունների գործառական-իմաստային յուրահատկությունները: Այդ նպատակի համար անհրաժեշտ ենք համարել լուծել հետևյալ խնդիրները՝

ա. քննել V-XII դդ. հայ պատմագրության մեջ առավել հաճախ գործածվող ցեղանունները, տալ դրանց համարժեքներն այլ լեզուներում, որոշարկել դրանց վերաբերությունները հատկանշվող առարկաների հետ,

բ. կատարել ցեղանվանական բառաշերտի բառակազմական-վերլուծական քննություն,

գ. կատարել ցեղանունների կիրառության իմաստաբանական քննություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Մի այնպիսի ուսումնասիրություն, որ կընդգրկեր ցեղանուններն իրենց ամբողջության մեջ, մինչ այժմ կատարված չէ՝ ի տարբերություն անձնանունների և տեղանունների, որոնց վերաբերյալ առկա են Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան» և Հ. Հյուբշմանի «Հին հայոց տեղոյ անունները» աշխատությունները: Ներկա ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում համալիր ձևով ներկայացնել V-XII դդ. հայ պատմագրության մեջ վկայված ցեղանվանական նյութն իր ամբողջության մեջ, տալ

ցեղանունների ընդհանուր բնութագիրը, անդրադառնալ դրանց բառակազմական և իմաստաբանական առանձնահատկություններին:

Առաջին անգամ փորձ է արվում համաժամանակյա և տարաժամանակյա կտրվածքներով ներկայացնել առանձնացված ցեղանուններից յուրաքանչյուրի վկայվածությունը և վերաբերությունները (այսինքն՝ տվյալ բառն ինչ առարկա է բնորոշում, ինչին է վերաբերում) հայ պատմագրության մեջ:

Առաջին անգամ տարաժամանակյա կտրվածքով և ամբողջական հետազոտությամբ ներկայացնում ենք ցեղանունների բառակազմությունը՝ տարբերակելով *մենաբառ* և *բառակապակցային ցեղանուններ* հասկացություններն ու որոշարկելով ցեղանվանակերտ ածանցները հայերենում, որոնցում էական դեր են խաղում իրանական ծագման ածանցները:

Իմաստաբանական պլանում անդրադառնում ենք ցեղանունների կիրառական առանձնահատկություններին՝ հոմանշություններին, իմաստափոխությանը և հատկանվանացմանը (իբրև անձնանուն կիրառվող ցեղանունները): Վերջինս շատ կարևոր է ոչ միայն ցեղանունների, այլև անձնանունների ուսումնասիրության տեսանկյունից և մինչև այժմ վրիպել է հայոց անձնանունների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների ուշադրությունից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նյութն ու արդյունքները գործնականում կարող են նպաստել ցեղանվանագիտության՝ իբրև բառագիտության մի առանձին բաժնի ուսումնասիրությանը՝ փաստորեն, լինելով առաջին նմանատիպ աշխատանքն այս ոլորտում: Այնուամենայնիվ, ներկա ուսումնասիրությունը չի սահմանափակվում զուտ լեզվաբանական և բառագիտական շրջանակներով: Աշխատանքում տեղ գտած որոշ հարցադրումներ և դրանց վերաբերյալ առաջարկվող տեսակետներն ու լուծումները դուրս են գալիս լեզվաբանական նեղ շրջանակներից և կրում միջգիտակարգային բնույթ՝ առնչվելով աղբյուրագիտական և բնագրագիտական խնդիրներին: Ցեղանունների ուսումնասիրությունն այս առումով շատ կարևոր կլինի տարբեր սկզբնաղբյուրների քննական-համեմատական բնագրեր պատրաստելու գործում: Ցեղանվանացանկի հիման վրա հետագայում կարող է կազմվել ցեղանունների բառարան:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սույն ատենախոսության համար նյութ են ծառայել V-XII դդ հայ պատմագրական երկերը: Ուսումնասիրությունն ավելի

ամբողջական ու արդյունավետ դարձնելու նպատակով առանձին դեպքերում նկատի են առնվել նաև հետագա դարերին վերաբերող աղբյուրները (մասնավորապես՝ հիշատակարանները), որոնցում առկա նյութը համեմատվում է V-XII դդ պատմագրության մեջ առկա նյութի հետ: Օգտագործվել են նաև գրաբարյան, միջինհայերենյան և այլալեզու բառարաններ:

Աշխատանքը կատարվել է տարաժամանակյա և համաժամանակյա վերլուծության մեթոդներով: Ցեղանունների հիմնական կազմը ներկայացնելիս կիրառել ենք նաև նկարագրական մեթոդը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են V-XII դարերը, որ գրաբար պատմագրության շրջանն է: Այս շրջանի պատմագրական երկերում վկայված է հայ մատենագրության մեջ հանդիպող ցեղանունների հիմնական կորիզը. ցեղանունների մի զգալի մասը կենսունակ է և գործածական նաև հետագա դարերի հայկական աղբյուրներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է և երաշխավորվել պաշտպանության ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության և Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնների համատեղ նիստի ընթացքում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից և երկու գլուխներից, որոնք ներառում են ենթագլուխներ ու ենթաբաժիններ, եզրակացություններից և գրականության ու համառոտագրությունների ցանկերից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են ընդհանուր տեղեկություններ ցեղանվանագիտության վերաբերյալ: Տրվում է հայերեն *ցեղանուն* տերմինի բացատրությունը: Քննարկվում է ցեղանվանագիտությունը հատկանվանագիտության մի առանձին բաժին դիտարկելու տեսակետը՝ ի տարբերություն ավանդաբար ընդունված մոտեցման, համաձայն որի՝ ցեղանունների ուսումնասիրությունը դիտարկվում է անձնանվանագիտության շրջանակներում: Հաշվի առնելով *ցեղանուն* տերմինի իմաստային լայն ընդգրկումը՝ ներածության շրջանակներում խոսում ենք նաև «բուն

կամ իսկական ցեղանուններ» և «ցեղանվան արժեք ունեցող միավորներ» հասկացությունների տարանջատման նպատակահարմարության մասին: Ըստ այդմ՝ «իսկական ցեղանունները» տվյալ էթնիկական միավորին տրվող պատմականորեն ձևավորված հիմնական անվանումներն են (լինեն դրանք ինքնանվանումներ, թե արտանվանումներ, հմմտ. *հայ, ռուս, պարսիկ, արմեն, ասորի, մար, սկյութ, խազար, հույն, քուրդ, ճիղբ* և այլն): Համապատասխանաբար ցեղանվան արժեք ունեցող միավորները տարբեր տեղանքների անվանումներից և պատկանելություն ցույց տվող վերջածանցներից կազմված անվանումներն են, ինչպես նաև բառակապակցային-նկարագրական արտահայտությունները՝ կազմված տարբեր հիմնաբառերից (նախահոր կամ նախամոր անունից, հատկանիշ ցույց տվող բառերից և այլն): Սրանց մեջ կարող են ընդգրկվել նաև վիրավորական, նվաստական, ծաղրական արտահայտչաձևերը, որ ստեղծվում են այլատյացության, թշնամական հողի, «մենք-նրանք» հակադրության հիման վրա:

Ներածության մեջ բերվում է նաև թեմային առնչվող ուսումնասիրությունների տեսություն:

ԳԼՈՒԽ Ի. ՅԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Այս գլխում առաջին անգամ փորձ է արվում գործնական ուսումնասիրությամբ ներկայացնել V-XII դարերի հայ պատմագրական աղբյուրներում վկայված ցեղանունները և տալ դրանց ցեղանվանական արժեքը, այսինքն՝ պարզել տվյալ ցեղանունով բնորոշվող առարկան: Ստորև բերվող ցեղանունները դասավորել ենք այբբենական կարգով: Այնքանով, որքանով թույլ են տալիս ատենախոսության ծավալային ընդգրկումները, հնարավորինս փորձել ենք տալ ներկայացվող թվով 59 ցեղանունների ընդհանուր բնութագիրը հայ պատմագրության մեջ: Անդրադարձել ենք յուրաքանչյուր ցեղանվան վկայություններին, հայերենում նրանց ունեցած ձևին, կազմությանը, այլ լեզուների հետ ունեցած համապատասխանություններին և նշանակությանը, այսինքն՝ որ ազգն է բնորոշվում տվյալ անվամբ: Յուրաքանչյուր բառամիավոր ներկայացված է առանձին ենթաբաժնով: Ըստ այդմ՝ առաջին զլուփը բաղկացած է 59 ենթաբաժիններից:

1.1. Աբխազ: Ներկայիս Վրաստանի հյուսիսարևմտյան հատվածներում, Սև ծովի մերձափնյա շրջաններում բնակվող արխազների (ինքնանվանումը՝ *ափսուա, ափսնի*) անվանումը հավանաբար կարելի է նույնացնել ասորեստանյան աղբյուրներից

հայտնի *abešla* անվանը, որին ամենայն հավանականությամբ համապատասխանում է հունահռոմեական աղբյուրների *Absilae* անվանումը, հմմտ. *Ափշիթ* (*Ապշեթ*), որ հանդիպում է «Աշխարհացոյց»-ում: Հայ պատմագրության մեջ *աբխազ* տերմինը հոմանշային հարաբերության մեջ է *վրացի* անվան հետ և, էթնիկական նշանակությունից զատ, ունի նաև վարչաքաղաքական նշանակություն:

1.2. Ալան: Հյուսիսային Կովկասում բնակվող իրանալեզու օսերի հին անվանումներից է: Ծագում է հին իր. *arya- «արիացի» ձևից: Էթնիկական նշանակյալ լինելուց զատ՝ V և հետագա դարերի հայկական աղբյուրներում *Ալան* ցեղանունն ունի տեղանիշ գործառնություն՝ ցույց տալով այն տարածքները, որոնք կոչվում են ալանների անունով կամ որտեղ ալաններ են բնակվել, հմմտ. Ալանաց դուռ, որ Դարիալի կիրճն է (*Daryal* < պրսկ.՝ *Dar-e Alān*):

1.3. Ալաման: Հայ պատմագրության մեջ (սկսած XII դարից) գերմանացիներին նշելու համար գործածվում է *ալաման* ցեղանունը, հմմտ. պրսկ. *ālmān*, թրք. *alman*: Այս բառը արևելյան լեզուներ է անցել ֆրանսերենից: Ալաման անունն էր կրում ֆրանսիացիների հարևանությամբ ապրող գերմանական ցեղերից մեկը, որի անվամբ էլ ֆրանսիացիներն ամբողջ գերմանացիներին կոչում են *alemann*:

1.4. Աղուանք: Հյ. Աղուանք անվանը համապատասխանում են հունահռոմեական աղբյուրների *Albanoi*, պրսկ. *Aran*, արաբ. *Arrān*, *al-Rān*, վրաց. *Rani* ձևերը: Աղուանք տերմինով հայ պատմագրության մեջ անվանվում են Կուր գետի և Կովկասյան լեռների միջև տարածվող և Մեծ Հայքին Կուր գետով արևելքից սահմանակցող համանուն երկրի բնակիչները: Այս անունը ձևաբանորեն դասվում է բառակազմական միևնույն կաղապարն ունեցող այն անվանումների շարքին, որոնք հայերենում միաժամանակ ունեն և՛ տեղանվանական, և՛ ցեղանվանական նշանակություն: *Աղվաններ* միաժամանակ կոչվում են և՛ Կուրի ձախափնյակի բուն աղվանական ցեղերի ներկայացուցիչները, և՛ Կուրից հարավ բնակվող հայերը, որոնք պատկանում էին աղուանական եկեղեցուն:

1.5. Ասորի: Համապատասխանում է հուն. *assurios* ձևին: Ունի էթնիկական և դավանական նշանակություն և վերաբերում է Սիրիայի սեմական ծագման քրիստոնյա ազգաբնակչությանը:

1.6. Աս: Հյուսիսկովկասյան օսերի անվանումն է: Այս անվանը համապատասխանում է վրացական *osi* ձևը: Հատկանշական է, որ XII դարի հեղինակ Մխիթար Գոշի մոտ *ալան* և *ou* ցեղանունները գործածված են միասին և վերաբերում են միևնույն ազգին, հմմտ.

«Այսպէս եւ ազգք հիւսիսականք՝ Ռուզն եւ Ալան-Աւան, եւ ...» (Մ. Գոշ, Թուղթ, ՄՀ, հ. Ի, էջ 472):

1.7. Ատրպատիճ: Վերաբերում է Ատրպատականի բնակիչներին: Կազմված է Մարաստանի սատրապ Ատրպատի (միջ. իր. *Āturpāt* բառացիորեն նշանակում է «կրակի կողմից պաշտպանված») անունից և հայերենում բավականին գործածական իրանական ծագման –*իժ* ցեղանվանակազմ վերջածանցի կցմամբ:

1.8. Արաբ: Էթնիկական նշանակությամբ, որտեղ նկատի կառնվեն արաբները, *արաբ* ցեղանունը վկայվում է XII դ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցու մոտ՝ *Արապիկ, ազգն Արաբկաց* ձևով, հմմտ. «գորածողով լինէին ազգն Արաբկաց», «... գՀալայպ էառ զԱրապիկն ի թագաւորէն Մարայ» (Մ. Ուռհ., էջ 2, 3, 59): V-XII դդ. հայկական աղբյուրներում արաբ անունը չի գործածվում: Արաբների համար գործածական են *տաճիկ, իսմայելացի, հագարացի, սառակինոս* տերմինները:

1.9. Արի (ք): V դարի հայ պատմագրության մեջ *Արի-ք* (սեռ.՝ Արեաց = հին պ. *Ariya-*) անունով կոչվում են պարսիկները և այն իրանական ժողովուրդները՝ մարերը, պարթևները, որոնք երբևէ իշխել են Իրանի տարածքում, այսինքն՝ այս անվանումն ունի ընդհանուր նշանակությամբ կիրառություն: *Արի-ք* ձևին զուգահեռ գործածական է նաև այս անվան մեկ այլ ձև՝ Երան (> Ժամ. Իրան): Երկու ձևերն էլ հանգում են հին իր. **arya-*ին: Նշանակում է, որ այս բառը հայերեն է մուտք գործել երկու անգամ, նախ՝ պարթևների, ապա՝ Սասանյանների ժամանակաշրջանում. հմմտ.՝ պրթ. *hj. Արի-ք*, սեռականը՝ Արե-աց < պրթ. *ary-* < հին իր. **arya-*, հին պ. *ariya*, սասանյան *hj. Երան* < միջ. պ. *ērān* < հին պ. *ariyānām*:

1.10. Արմեն: *Արմեն* բառը օտարների կողմից հայերին տրվող ամենատարածված անվանումն է: Այս անվան առաջին հիշատակությունը հայ պատմագրության մեջ պատկանում է Մովսես Խորենացուն (V դ.), որն այս անվանումը կապում է Հայկ նահապետի հաջորդներից Արամի անվան հետ, հմմտ. «Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտից... յորոյ անուն եւ զաշխարհս մեր անտանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք եւ Ասորիք՝ Արմէնիկք» (Մ. Խոր., ՄՀ, հ. Բ, էջ 1787):

1.11. *Աֆղան: Աֆղանստանի հիմնական բնակչության անվանումն է, (հմմտ. պրսկ. *afγān*): Կարծիք կա, որ Թովմա Արծրունու մոտ (X դ.) վկայվող *Ապղաստան աշխարհ*-ը վերաբերում է աֆղաններին: *Ապղաստան* տեղանունը S. Դալայանը վերականգնում է իբրև *Աֆղանստան: IX դարում գրավոր հայերենում /ֆ/ հնչյունը

բացակայում էր՝ փոխարինվելով /փ/ կամ /պ/ տառերով: Հետևաբար չի բացառվում, որ Աֆղանստան ձևը հայերենում –ստան-ից առաջ երկրորդական -ն-ի անկման կամ սխալագրության հետևանքով դառնար *Ապղա[ն]ստան:

1.12 *Բահղիճ: Կարծում ենք, որ **Բահղիճ* ցեղանունն ունի կազմության միևնույն տրամաբանությունը, ինչ *Արրպպարիճ* և **Բաղասիճ* ձևերը, այսինքն՝ տեղանուն + -իճ ցեղանվանակազմ ածանց: Տվյալ դեպքում կնշանակի «Բահլ քաղաքի բնակիչներ»: Այս քաղաքի անունը հայ մատենագրության մեջ վկայվում է զանազան հնչյունափոխված և դրափոխված տարբերակներով՝ *Բահլ, Բալի, Բահղ, Բաղի, Բալխ* և այլն (Մ. Խոր., ՄՀ, հ. Բ, էջ 1848 և տարընթերցումները): Հետևաբար չենք բացառում նաև **Բահղիճ/Բահիճ* հնարավոր տարբերակի գոյությունը, որ հետագայում տարընթերցման հետևանքով դարձել է *Բահղիճաց/Բախղիճեաց*:

1.13. *Բաղասիճ: *Բաղասիճ - Բաղասական* տեղանունից կազմված ցեղանվանական ձև է, այսինքն՝ Բաղասականի բնակիչներ, բաղասականցիներ՝ -ական վերջածանցի անկմամբ և ցեղանվանակերտ -իճ վերջածանցի հավելմամբ, հմմտ. *Արրպպարական > Արրպպարիճ* (Ատրպատականի բնակիչ, ատրպատականցի): Այս անվան հիմքում կարելի է տեսնել հնագույն **բաղ* կոչվող ցեղերի անունը, որից նաև՝ *Բաղք* տեղանունը՝ Սյունիքի գավառներից:

1.14. Բասիլ: Այս անվամբ կոչվում են թյուրքական ծագման բերսիլների ցեղերը:

1.15. Բուղար: Հայերեն *բուղար* համապատասխանում է հունարեն Βούλγαρος-ին՝ վերջին -*ոս*-ի անկմամբ: *Բուղար, Բուկար, Բլկար, Բոկար*, ինչպես նաև՝ *Պուղար* ձևերով այս ցեղանունը վկայվում է «Աշխարհացոյց»-ում, որտեղ ունի ընդհանրական նշանակություն: Համաձայն «Աշխարհացոյց»-ի՝ «... ըստ *հիսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուղարաց, ըստ անուանց գեւորոյ կոչեցեալ, Կուսի Բուղար, Դուչի Բուկար, Ողխոնփոր Բլկար եկն, Չդար Բոկար...*» (Աշխարհացոյց ՄԽՅՆ, ՄՀ, հ. Բ, էջ 2149): Բերված հատվածից հասկանալի է դառնում, որ *Կուսի, Դուչի, Ողխոնփոր* և *Չդար* ցեղանունները վերաբերում են թյուրքական ծագման մանր ցեղային միություններին, որոնց համար ընդհանուր է *Բուղար* անունը:

1.16. Գեղ: Հյուսիսիրանական մերձկասպյան շրջանների ազգություններից գիլանցիների անվանումն է: Հյ. *Գեղ, գել* անվանը համապատասխանում են հուն. Geloι, նոր պ. Gēl ձևերը:

1.17. Դելմիկ: Նոր պ. Dēlam, dēlami < *dēlumik = հյ. դելմիկ (դլմիկ): Հայտնի են նաև *դելմ* արմատից կազմված՝ *Դելմաստրան* տեղանունը (Ստ. Տար., ՄՀ, հ. ԺԵ, էջ 761) և *-իկ* վերջածանցով կազմված՝ *Դելմիկը* (Մ. Կաղանկատուացի ՄՀ, հ. ԺԵ, էջ 416) ձևը: Արիստակես Լաստիվերցու մոտ վկայվող *Դելմից* (Ար. Լստվր., ՄՀ, հ. ԺԶ, էջ 587) ձևը *Դելմը* անվան սեռական հոլովն է, որ և նշանակում է «դելմամիների երկիր»: Հայերեն *Դելմը* և *դելմիկ* անունները գտնվում են միևնույն փոխհարաբերության մեջ, ինչ *Պարսը* և *պարսիկ* ձևերը:

1.18. Թավասպար: Այս ցեղանունը նույնանում է ներկայիս թաբասարանցիների անվանմանը: Սրանք կովկասաբնակ ժողովուրդ են, որոնց լեզուն պատկանում է կովկասյան լեզվախմբի լեզգիական խմբին:

1.19. Թուրք: Առաջին վկայությունները վերաբերում են XII դարին, հմմտ. «... *Եւ կարգեցաք անդ զօրավար զայր ոմն, որ կոչէր Թուրք ...*», «*Ընդ ատուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին խուժադուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին Թուրք...*» (Մ. Ուռհ., էջ 22, 47): Գործածված է ընդհանուր իմաստով և վերաբերում է XI-XII դարերում Փոքր Ասիա և Հայաստան ներթափանցած թյուրքական տարբեր ցեղերից բաղկացած հորդաներին՝ այսպես կոչված սելջուկ թյուրքերին ընդհանրապես:

1.20. Թուրքման: Համաձայն ամենատարածված վարկածի՝ ստուգաբանվում է իբրև թյուրք ցեղանվան և պարսկերեն mānand (նման) բառերի միացումից առաջացած կազմություն, այսինքն՝ «թյուրքի նման», «ինչպես թյուրքը»: Ամենավաղ հիշատակությունը հավանաբար վերաբերում է XII դարի (1118 թ.) հիշատակարաններից մեկին, հմմտ. «*Եւ գրեցաւ ի ՇԿէ (1118) թուականիս Հայոց... ասպատակել անաւրէն ազգին Իսմայելի, որ կոչի Թուրքման եւ մականունն Խարամիք (Հարամիք) ...*» (Ե-ԺԲ դդ. հիշ., էջ 153):

1.21. Իժմախ: Կովկասաբնակ ազգություններից էին իժմախները, որոնց անունը, դրված հոգնակի - սեռական *Իժմախաց* ձևով, վկայվում է V դարի պատմիչ Փավստոս Բուզանդի մոտ (Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 284): Ըստ երևույթին՝ *Իժմախ* անվան հնչյունափոխված մի տարբերակ է վկայվում X դարի մատենագիր Մեսրոպ Վայոցձորեցու մոտ՝ **Ճմահ* ձևով՝ *Ժ/Ճ* և *խ/հ* հնչյունների հերթազարկությամբ և սկզբնահնչյուն *Ի*-ի անկմամբ:

1.22. Լփին: Հյ. *Լփին* ցեղանունը վերաբերում է Կովկասյան Աղվանքի կազմի մեջ մտնող 26 ցեղերից մեկին, որոնք բնակվում էին Կովկասյան լեռներից Կուր գետն ընկած հատվածում: *Լփին* ձևից *ք*

հոգնակերտ վերջածանցի միջոցով կազմվում է նաև ազգագավառի անվանում՝ *Լփհնք*:

1.23. Խափշիկ: Հայերեն *խափշիկ* ցեղանունը համապատասխանում է միջին պարսկերեն *xabašik ձևին, որ հանգում է արաբ. պրսկ. habaši՝ «եթովպացի» բառին: Հայ պատմագրության մեջ *խափշիկ*՝ իբրև գոյական գործածվում է «եթովպացի», իսկ իբրև ածական՝ «սևամորթ» նշանակություններով:

1.24. Խազիր: Այս ցեղանունը հայ պատմագրության մեջ վկայվում է *ամբոխություն գխազրաց* (Մ. Խոր., ՄՀ, հ. Բ, էջ 1949), *մարզէ Խազրաց* (Յ. Դրասխ. ՄՀ, հ. ԺԱ, էջ 415), *ի Խազիրս* (Մ. Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 150, 225) կապակցություններում և վերաբերում է թյուրքական ծագման այն ժողովուրդներին, որոնք IV դարից հետո ներխուժեցին Արևելյան Եվրոպա, ապա բնակվեցին Կասպից ծովի արևմտյան մերձափնյա շրջաններում:

1.25. Խուժիկ: *Խուժիկ* ցեղանունը ծագումնաբանորեն կապվում է Իրանի Խուժաստան նահանգի անվան հետ և կազմված է *Խուժ* արմատից ու ցեղանվանակազմ *-իկ* վերջածանցից, հմմտ. հյ. *խուժիկ* < միջ. պ. *xuzīk, Ժամ. պ. xūzī, այսինքն՝ «Խուժաստանի բնակիչ», «խուժաստանցի»: Առանց *-իկ* վերջածանցի՝ *Խուժ* արմատը վկայվում է իբրև հասարակ բառ և հայ մատենագրության մեջ ունի «վայրենի», «վայրենաբարո ամբոխ» նշանակությունը՝ շատ հաճախ կապակցվելով *դուժ* բառի հետ:

1.26. Ծաղ: *Ծաղ* անունը հայ պատմագրության մեջ առաջին անգամ վկայում է X դարի պատմիչ Ուխտանեսը: Ինչպես գրում է Հ. Աճառյանը, *Ծայթ*, որ և *ծայր*, *ծայթ*, *ծաղ*, գործածված է իբրև նախատական բառ՝ «հավատքի մեջ թերի կամ ազատամիտ» նշանակությամբ: Կարելի է նշել, որ *ծաղ* ցեղանունն ունի կրոնադավանական նշանակություն:

1.27. *Կատիշ: Հին հունական դասական հեղինակների մոտ վկայվող καθοιστοι ցեղանվան համարժեքն է հայկական աղբյուրներում հանդիպող **Կատիշ* անունը: Մոտավորապես այն միևնույն տարածքներում, որտեղ բնակվելիս են եղել կատիշները, ներկայումս բնակվում են իրանական ազգություններից թալիշները:

1.28. Հայ: Հայերի ինքնանվանումն է, որ գործածվում է՝ սկսած V դարից:

1.29. Հելլեն: *Հելլեն* ցեղանունը հույն ժողովրդի ինքնանվանումն է (էնդոէթնոնիմ կամ ավտոէթնոնիմ), հմմտ հյ. *հելլեն* < հուն. *Ellen*: Գործածվում է V դարի հայկական աղբյուրներում:

1.30. Հեճմատակ: Հեճմատակ ցեղանունը վկայվում է V դարի հայ պատմագրության մեջ: Հայտնի չէ, թե մասնավորապես կովկասյան որ ժողովուրդն է հատկանշվում *հեճմատակ* ցեղանվամբ: Կարծիք կա որ *հեճմատակ* անունն ընկած է ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Խաչմաս կոչվող մերձկասպյան շրջանի տեղանվան հիմքում:

1.31. Հեփթաղ: Հայերեն *հեփթաղ* անվանը համապատասխանում են միջ. պ. *Hephtal*, հուն. *Εφθαλιται* (Hephthalites) ձևերը: Սկզբնապես լինելով ցեղանուն՝ *հեփթաղ* տերմինն այնուհետև ձեռք է բերում ընդհանուր նշանակություն և կիրառվում է իբրև քաղաքական անվանում՝ ցույց տալով պետական-քաղաքական այն կազմավորումը, որը կոչվում էր հեփթաղների անունով:

1.32. Հնդիկ: Առաջին անգամ վկայվում է V դարի հեղինակ Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց»-ում, որտեղ հոմանիշ է «սևամորթ», «սևադեմ» նշանակությանը: Հյ. *հնդիկ* ձևին համապատասխանում են պիլ. *Hindūk*, նոր պ. *Hindū* ձևերը:

1.33. Հոն: Հոն ցեղանունը հայ պատմագրության մեջ ունի ընդհանրական նշանակություն: Այն ընդհանուր անվանում է եղել հոների ցեղային ֆեդերացիայի կազմի մեջ մտնող թյուրքական ծագման մի շարք այլ էթնիկական միավորների համար՝ բուլղարներ, սուվարներ, ավարներ, խազարներ: Հետագա դարերում *հոն*, *ազգն հոնաց* են կոչվում դիչաղները. XV դարի հայերեն հիշատակարաններում *աշխարհն Հոնաց*, *երկիրն Հոնաց* արտահայտությունները վերաբերում են Ոսկե Հորդային, իսկ մոնղոլների առաջնորդ Լենկ-Թեմուրը կոչվում է *թագաւորն Հոնաց*:

1.34. Հոռոմ: Հոռոմ/Հոռոմ բառը հայերեն է մուտք գործել հունարենից, որտեղ հուն. սկզբնահնչյուն *rh*-ին համապատասխանում է հայերեն *hr*-ն, հմմտ. հուն. Ρουφίνος = հյ. Հոռոփանոս: Հոռոմ ցեղանվամբ հայ մատենագրության մեջ բնորոշվում են հույները: Այս բառն առաջացել է Հոռոմ քաղաքի անունից և սկզբնապես նշանակել է «հոռմեացի», «Հոռոմի բնակիչ»: Հետագայում, երբ Հոռոմեական կայսրությունը փոխվեց Բյուզանդիայի, *հոռոմ* անունն էլ սկսեց գործածվել հույների վերաբերյալ:

1.35. Հրեայ: Հրեաների հայերեն անվանումը կազմված է **hureay* = **huḏeay* ձևից, որ ասորերեն *ihūdāyā* ձևին է համապատասխանում, որտեղ *-եայ* վերջավորությունը ցույց է տալիս պատկանելություն (ինչպես օրինակ, *քրիստոնեայ* կամ *քաղղեայ* բառերում) և բառացի նշանակում է «Հուդայական, Հուդայի

հետևորդ», հմմտ. հյ. *հրեայ*, ասոր. *ihūdāyā, yūdāyā*, արաբ. *yahūd*, նոր պ. *jūhūd*: Կիրառվում է միաժամանակ էթնիկական և կրոնադավանական նշանակություններով:

1.36. Դանկուարտ: *Դանկվարտ*, *լունկուպարտ* նույն լանգոբարդներն են կամ լոնգոբարդները (= երկայնամորուսներ), հմմտ. *ազգն Դանկուարտացն* (Մ. Խոր., ՄՀ, հ. Բ, էջ 2060): Այս անունը կրող ժողովուրդները գերմանական ծագում ունեին:

1.37. Դեկ: Ներկայիս Ադրբեջանի Հանրապետության հյուսիս-արևելյան, ինչպես նաև Հարավային Դաղստանի շրջաններում կենտրոնացած լեզգիները հայ պատմագրության մեջ վկայվում են դեռևս V դարից *լեկ/դեկ* ձևով: Ըստ Հ. Կարապյոզյանի՝ այս ցեղանունը առաջացել է Լեկիու երկրանունից, որ առաջին անգամ հիշատակվում է Արգիշթի Ա-ի (786-764 թթ.) Լճաշենի ժայռափոր արձանագրության մեջ:

1.38. Դփչաղ: Հայերենում *դփչաղ* ցեղանունը համապատասխանում է պարսկերեն *ջարձաջ* ձևին, որ վերաբերում է թյուրքական ծագման միջինասիական ցեղերից մեկին: Հայ պատմագրության մեջ *դփչաղ* ցեղանվան ամենավաղ վկայությունը հավանաբար վերաբերում է XII դարին: Այս ցեղանունը /ղ/խ/և /բ/փ/ հնչյունների հերթագայությամբ՝ *խփչախ* ձևով վկայվում է Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ (Մ. Ուռհ., էջ 298):

1.39. Ծեն: Ըստ Հ. Հյուբշմանի՝ հայ մատենագրության մեջ վկայված *Ճեն-ք* (հոգ. սեռ.՝ *Ճենաց*) անունով կոչվում են չինացիները: Հայկական աղբյուրներում հիշատակվող *Ճեները* նույնացվել են նաև ճաների (цаньи) հետ: Ք. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի ռուսերեն թարգմանության իր ծանոթագրություններից մեկում հայտնում է, որ հայ պատմիչների վկայած *ճեները* բնակվում են Քաշղարի մոտերքում: *Ճեների* երկրի տեղադրության հարցով զբաղվել է նաև Հ. Սվազյանը, որը նրանց տեղադրում է Ամու-Դարյայի և Սիր-Դարյայի միջև տեղավորված տարածության այն մասում, որը հետագայում՝ արաբներից նվաճվելուց հետո, նրանց կողմից կոչվեց Մավարաննահր՝ Սամարղանդ կենտրոնով: Այն, որ հայկական աղբյուրներում վկայված *Ճենք*, *Ճենաց աշխարհ* անունները չեն վերաբերում չինացիներին, հաստատում է նաև Լ. Հովհաննիսյանը: Վերջինս, ի թիվս այլ փաստարկների, նշում է, որ բազմաթիվ լեզուներում *Չինաստան* բառի արմատի ծայնավորը *ի* է. հմմտ. անգլ. China, գերմ. China, իտալ. Cina, ռուս. Китай և այլն: *Չին(աստանը)* եթե լիներ V դարում վկայված *Ճենքը*, *Ճենաց աշխարհը*, ապա վերջինները պիտի ունենային **Ճինք* կամ **Ճէնք*, քանի որ գործում է է-ի

հնչյունափոխությունը և ոչ թե՛ *ե-ի* (հմմտ. վեմ-վիմի., տեր-տիրոջ, սեր սիրոյ...և այլն):

1.40. Ճիղբ: Հյ. *Ճիղբ* ցեղանունով բնորոշվում են Կովկասյան Աղվանքի կազմի մեջ մտնող ցեղերը, որոնք, ի թիվս կովկասաբնակ այլ ցեղերի, IV դարի 30-ական թթ մասնակցում էին մագրությունների թագավոր Սանեսանի՝ դեպի Հայաստան կատարած արշավանքին: Հավանական է համարվում *Ճիղբ* անվան նույնացումը հին հունահռոմեական աղբյուրներում վկայված *Silvi* ցեղանվան հետ:

1.41. *Ճմահ – տե՛ս Իժմախ:

1.42. Մագրութ:

Հայ պատմագրության մեջ *Մագրութ* (հունահռոմեական աղբյուրներում՝ *masaget*) ցեղանունը հիմնականում կիրառվում է ոչ թե էթնիկական նշանակությամբ, այլ նշելու համար աշխարհագրական, պետական-քաղաքական կամ ռազմական այն միավորները, որ կոչվում են մագրությունների անունով:

1.43. Մար: Իրանական հնագույն ցեղերից մեկը հայ պատմագրության մեջ վկայվել է *մար* և *մեդացի* ձևերով: Սրանցից հիմնականում գործածական է *Մար (mar)* ձևը, որ ցույց է տալիս հայերենում պարթևերեն փոխառություններին հատուկ հնչյունական փոփոխության օրինակափոխություն՝ -ծ- > -r- զարգացմամբ *māδ (<հին իր. *māda-) > *mar* ձևով, հմմտ.՝ հին պ. māda-, միջ. պ. māh: Մյուս՝ *մեդացի (med-aci)* ձևը կազմված է հունական *mēdoi* < *mādoi ձևից՝ հայերեն *-ցի* վերջածանցով:

Շեռագա շրջանի աղբյուրներում՝ սկսած XII դարից հայ մատենագրության մեջ *մարեր* են կոչվում քրդերը:

1.44. Յոյն: Հյ. *Յոյն-ք* (հոգ. սեռ.՝ *Յունաց*) = հին պ. Yauna-, նոր պ. Yūnān: Հայ պատմագրության մեջ հույն ժողովրդին նշելու համար գործածվող ամենատարածված անվանումն է:

1.45. Ուգ: Թյուրքական ծագման ազգություններից էին ուգերը հիշատակվում են XII դարի պատմիչ Մատթեոս Ուռայեցու «Ժամանակագրության» մեջ, հմմտ. «*շարժեցաւ պարտերազմ մեծ ի յաշխարհն յարևմտից ի յազգէն Ուգաց:*» (Մ. Ուռ., էջ 151-152):

1.46. Ունգո: Հայ պատմագրության մեջ հունգարացիների համար գործածվող ցեղանուններից է *ունգո* անվանումը: Հայերեն *ունգո* անունը համապատասխանում է հունարեն Ούγγροι (Oungroi) անվանաձևին և հավանաբար այդտեղից էլ անցել է հայերենին: Այս անունը հայկական աղբյուրներում վկայվում է նաև *ունկաւացի* ձևով:

1.47. Պածինակ: Թյուրքական ծագման պեչենեգները հայ պատմագրության մեջ վկայվում են *պածինակ* ձևով, որ հավանաբար փոխառություն է հին հուն. Πατρίνακοι ձևից:

1.48. Պարթև: Իրանական ծագման պարթևները վաղ միջնադարյան հայկական աղբյուրներում վկայվում են *պարթե* (հոգ.՝ *պարթեթ*) ձևով, որին համապատասխանում է հին պարսկերեն *parθava- ձևը, որից նաև՝ հուն. πάρθοι ձևը:

1.49. Պարսիկ: Հայերեն *պարսիկ* բառը ծագումնաբանորեն կապվում է Իրանի կենտրոնական Ֆարս (միջ. պ. Pārs, նոր պ. Pārs, արաբ. Fārs < հին պ. Pārsa-) նահանգի անվան հետ. հմմտ. հյ. *պարսիկ* (հոգ.՝ *Պարսիկթ*) < միջ. պ. pārsik, նոր պ. pārsī, արաբ. fārsī, ժամ. պ. fārsī՝ իր. -ik վերջածանցի կցմամբ:

1.50. Ռաժիկ: *Ռաժիկ* ցեղանունը կազմված է Ռեյ գավառի անունից և իրանական -ձիկ վերջածանցից, այսինքն՝ «Ռեյ գավառի բնակիչ»: Հայերենում նմանատիպ կազմություններ են նաև *սագճիկ* և *դաճիկ* ցեղանունները:

1.51. Ռուս: *Ռուս* ցեղանունը հայ պատմագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է X դարում՝ *ռուզիկ*, *Ռուզագ* ձևերով:

1.52. Սագճիկ: Հայերեն *Սագճիկ* անունը կազմված է *սակ* ցեղանվան և իր. -ձիկ վերջածանցի կցմամբ = պիլվ. *sakձիկ= նոր պ. *Sagzi* < հին պ. *Saka*:-

1.53. Սկյութ: Հայ մատենագրության մեջ վկայվող *սկյութ*, *սկյութացի* ձևերը համապատասխանում են հունական Σχύθαι անվանը: *Սկյութացի*, որ Սկյութիա տեղանունից և -ցի պատկանելություն ցույց տվող վերջածանցից կազմված ցեղանվանական ձև է, հանդիպում է V դարի պատմիչ Մովսես Խորենացու մոտ:

1.54. Վռանգ: Վարյագների հայերեն *վռանգ* անվանումը հանգում է հունարեն Βάραγγος ձևին (սկանդինավյան vaeringjar՝ «վարձկաններ» բառից): Հունարեն Βάραγγοι (*Վռանգ*) էին կոչվում այն ռուս-սկանդինավ վարձկանները, որոնք գալիս էին Կիևյան Ռուսիայից Բյուզանդիա և X դարի վերջերից կազմում մի հատուկ զորամաս:

1.55. Վրացի: Կովկասյան ժողովուրդներից վրացիները (ինքնանվանումը՝ քարթվելի) հայ մատենագրության մեջ վկայվում են՝ սկսած V դարից: Վաղ շրջանի մատենագրական աղբյուրներում վրացիներին կամ նրանց երկիրը նշելու համար գործածվում է *Վիրք* անվանաձևը, որ նշանակում է «վրացիներ» և «Վրաստան», այսինքն՝ միևնույն ժամանակ ունի ցեղանվանական և տեղանվանական նշանակություն:

1.56. Տաճիկ: Հյ. Տաճիկ անունը կազմված է արաբական طي «Տաի», ասոր. *Sahjayt*, ցեղանվանն իր. -čik վերջածանցի կցմամբ, հմմտ.՝ պիվ. *tāčik*, **tāziy* > հյ. *տաճիկ*, նաև՝ պրսկ. *tāzi*՝ «արաբական» (նաև՝ «արաբ»), սողդ. *tzyk*, *tāzik*՝ «արաբ», խոթ. սակ. *ttāšiki*, *ttāšikvā*՝ «արաբներ»: Այս անունը «արաբ» նշանակող հիմնական անվանումներից է հայ մատենագրության մեջ՝ ի թիվս *սառակինոս*, *Իսմայելի որդիք* և *հազարացի* բառերի:

1.57. Փռանկ: Հայերեն *Փռանկ* (գրչագրական այլ տարբերակեր են Ֆրանկ, Ֆռանգ, Ֆրանգ, Փռանկ, Փռանգ, հմմտ. պրսկ. *farang*, թրք. *freng*, *frenk*) անունը փոխառություն է լատիներենից և նշանակում է «լատինացի»:

1.58. Քուշան: Հայկական աղբյուրներում *քուշան* ցեղանունը նույնացվում է *հեփթաղ* անվան հետ, որ նույնպես միջինասիական հին ժողովրդի անվանում է: «Նոր Հայկագեան բառարանում» Խորենացու մոտ վկայվող *քուշանաբար* մակբայը բացատրվում է «*իբրև զքուշանս կամ զհեփթաղս*»:

1.59. Քուրդ: Քուրդ ցեղանվան առաջին վկայությունները հայ պատմագրության մեջ, էթնիկական մի որոշակի միավորի վերաբերմամբ, XII դարից են և հանդիպում են Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ, հմմտ. «*Եւ յայնժամ Հասան կոչեաց ռայիս մի Քուրթ, որ էր իւր սահմանակից*», «*և հասանէր ի հեպ' որ աւագ էր Քրդացն' որում անունն Խայթ ասէին*» (Մ. Ուռհ., էջ 91, 144):

ԳԼՈՒԽ II. ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՎԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ գլուխը, որ նվիրված է ցեղանունների բառակազմական և իմաստագործառական առանձնահատկություններին, բաղկացած է երկու ենթագլխից, որոնք էլ ստորաբաժանվում են մանր ենթաբաժինների:

2.1. Ցեղանունների բառակազմությունը: Բառակազմական պլանում տարանջատում ենք մենաբառ և բազմաբառ ցեղանուններ:

2.1.1. Մենաբառ ցեղանունները մեկ բառով արտահայտված ցեղանուններն են և, ըստ կազմության, լինում են **ա. պարզ կամ արմատական:** Բառային այս միավորներն անտրոհելի են, հմմտ. *հայ*, *մար*, *ռուզ*, *ճեն*, *յոյն*, *հոն*, *ղեկ* և այլն: **բ. ածանցավոր:** Այստեղ առանձնացնում ենք ցեղանվանակերտ հետևյալ ածանցները՝ ● – **ացի/եցի/ցի.** այս ածանցը կցվում է տարբեր կազմության տեղանուններին և կազմում է էթնիկոններ՝ ցույց տալով տվյալ վայրի ներկայացուցիչ, հմմտ.՝ Ափրիկ-*եցի*-ք < Ափրիկէ, Բիւզանդ-*ացի*-ք < Բիւզանդիա՝ -իա ածանցի անկումով, Եգիպտ-*ացի*-ք < Եգիպտոս՝ -ոս-

վերջածանցի անկումով և այլն: *-agh* վերջածանցը կազմում է էթնոնիմներ՝ կցվելով նախահոր կամ նախամոր անձնանվանը, հմմտ.՝ հազար-*agh*-ք (հոգ. սեռ.՝ հազարացոց)՝ Հազարի անունից, Իսմայել-*agh*-ք՝ Իսմայելի անունից և այլն: ● **-եսյ**. պատկանելություն ցույց տվող գրաբարյան այս վերջածանցը հանդիպում է հայերեն *հրեայ* ցեղանվան մեջ, հմմտ. *Հուր+ *-եսյ*= Հրեայ, որտեղ *Հր-ը Հուրա անվան հնչունափոխված ձևն է՝ միջբաղաձայնային ու-ի սղմամբ: *-եսյ* վերջածանցին ժամանակակից հայերենում համապատասխանում է *-յա* ձևը: ● *-ի*. ոչ կենսունակ վերջածանց է և հանդիպում է *ասորի* ցեղանվան մեջ: Հ. Բեյլին այս վերջածանցը նույնացնում է քրիստոնեական սողերենի անվանական հայցական *-ī* վերջավորության հետ: ● **-իկ** վերջածանցով վկայված ցեղանունները հայ պատմագրության մեջ զգալի թիվ են կազմում: Այս ածանցը հանգում է միջ. պ. *-ik* ձևին, նոր պ.-ում՝ *-k* -ի անկմամբ, հմմտ.՝ միջ. պ. *pārsik* > նոր պ. *pārsī* կամ արաբականացված ձևը՝ *fārsī*: Պարսիկ ցեղանունից գատ՝ *-իկ* վերջածանց է հանդիպում նաև հնդ-*իկ*-ք, դել-*իկ*-ք, դելեմ-*իկ*-ք, բալ-*իկ*-ք, ռուգ-*իկ*, գերման-*իկ*-ք, թուխար-*իկ*-ք, արմեն-*իկ*-ք, վրկան-*իկ*-ք ձևերում: ● **-իճ** վերջածանցը հանգում է վաղ միջին իրանական *-ē/ič* ցեղանվանակազմ ձևույթին, հմմտ. *Ատրպատ-*իճ*-ք, *Բաղաս-*իճ*-ք (հոգ. սեռ.՝ Բաղասճաց): Այս ածանցը առկա է նաև Լաիիջ անվան հայկական տարբերակում՝ Աղահ-*իճ*-ք, որ Սյունիքի գավառներից մեկի անվանումն է: Այս անվան նախատիպ հիմքն է *լահ* ցեղանունը: ● **-ճիկ** վերջածանցը հանդիպում է մի քանի ցեղանուններում և հանգում է իրանական *-čik* ածանցին, հմմտ. տա-*ճիկ*), *սագճիկ* = նոր պ. *sagzi* < հին պ. *Saka* «սակ» և *ռաճիկ* (Ռաժի՞կ) = նոր պ. *rāzi* ձևը, որ հավանաբար կարելի է տեսնել Մանաճիիր Ռաժիկի անվան մեջ, հմմտ. «Յառաջին ամի տրա սուրբն Մանաճիիր, որ անուանեցաւ Գրիգոր, ազգաւ ռաժիկ» (Կ. Գանձակեցի, էջ 41): ● *-ք* հոգնակիակերտ ցուցիչը, կազմության մեջ մտնելով երկրանունների (տեղանվանակերտ *-սրան* վերջածանցով), *-սրան* + *-եսյ* ածանցների, ինչպես նաև *-ական*, *-եան* վերջածանցների հետ, ցույց է տալիս որևէ երկրին, խմբին, ժողովրդին պատկանող մարդկանց հավաքականություն և ձեռք է բերում ցեղանվանական վերջածանցի արժեք, հմմտ. Թուրք-*ա-սրան*-ք, Հոն-*ա-սրան*-ք, Խուժ-*ա-սրան*-*եսյ*-ք, Պարսկ-*ա-սրան*-*եսյ*-ք, Հայ-*ա-սրան*-*եսյ*-ք: Քննարկվող վերջածանցը գործածվում է նախատիպ հիմք (ցեղանուն, անձնանուն) + *-ական*, *-եան* ածանցների հետ, հմմտ.՝ Յուն-*ական*-ք, Աքբանագ-*եան*-ք: *-ք* վերջածանցը կցվում է նաև անձնանվան ուղիղ ձևին՝ կազմելով ցեղանուն, հմմտ.՝ «Հանապազ գրպարտորք և սպանորք են

յուղայքն»: **գ. բարդ:** Յեղանվանական կազմությունների բարդ ձևերը բաղկացած են մեկից ավելի անվանական մասերից և ածանցներից: Այսպիսի ցեղանունների օրինակներ են *գեղմնազգի, հայազարմ, հայազն, ճենազն, քրդազգի:* Հանդիպում են նաև երկու հատուկ անուններից կազմված բարդ ձևեր՝ ածանցված *-ացի* վերջածանցով, հմմտ.՝ *արաբեգիպոացի, մարապարսացի:* **2.1.2. Բազմաբառ ցեղանուններ:** Սրանք հարադրավոր կապակցություններ են, որ կազմված են հատուկ անունից և *ազգ, ժողովուրդ* հասկացությունն արտահայտող հասարակ բառերից: Հայերենի ցեղանվանակերտ հիմնական բառաշերտն են կազմում հետևյալ հասարակ անունները՝ *ազգ, ազն, զարմ, ցեղ, ծնունդք, որդիք, զավակ, ժողովուրդ:* Հարադրավոր կազմությամբ ցեղանուններում այս բառերին կցվող հատուկ անունները լինում են նախադաս և ետադաս, հմմտ. *թուրք ազգն, յուղա ազգն, Հայաստան ազգն, Լափինացուց ազգ, ազգն Հազարու, որդիքն Մահմեդի* և այլն:

2.2. Իմաստաբանություն: Ցեղանունների իմաստային կողմի քննությունը ցույց է տալիս, որ ուղիղ իմաստից գատ, այն է՝ նշել տվյալ էթնիկական միավորը, ցեղանունները գործածվում են զանազան այլ նշանակություններով: Ինչպես միևնույն ազգը կարող է կոչվել տարբեր ձևերով, այնպես էլ միևնույն ցեղանունը, էթնիկական նշանակությունից գատ, կարող է կիրառվել՝ նշելու համար կրոն, դավանանք կամ ձեռք բերել հավելյական իմաստ: Ավելին, հայ մատենագրական նյութի քննությունը ցույց է տալիս, որ զգալի թվով ցեղանուններ հատկանվանացել են և գործածվում են իբրև անձնանուններ: Այսպես, ցեղանունների իմաստաբանական քննությունը հիմնված է նրանց կիրառական առանձնահատկությունների վրա: Ըստ կիրառության՝ առանձնացնում ենք ցեղանունների 1. էթնիկական նշանակություն, 2. կրոնադավանական, երբ ցեղանունը գործածվում է ոչ թե էթնիկական միավոր, այլ տվյալ էթնիկական միավորի դավանած կրոնը նշելու համար, 3. հավելյական (երկրորդական զարգացման արդյունքում ձեռք բերած ածականական իմաստ) նշանակություն, 4. ցեղանունների հատկանվանացում (ցեղանուններ, որոնք հայերենում դարձել են անձնանուններ):

2.2.1. Ցեղանունների էթնիկական նշանակությունները: Հայ պատմագրության մեջ ցեղանվանական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համաժամանակյա կտրվածքով՝ միևնույն էթնիկական միավորը կարող է կոչվել մեկից ավելի ցեղանուններով ու բառակապակցային-նկարագրական ձևերով: Ցեղանունների՝

տարաժամանակյա կտրվածքով քնությունն էլ պարզում է, որ վաղ վկայություններ ունեցող հին ցեղանունները, որոնցով բնորոշվող ազգերն այլևս դուրս են եկել պատմական ասպարեզից, ուշ միջնադարյան հայկական աղբյուրներում կարող են վերաիմաստավորվել և կիրառվել պատմիչին ժամանակակից և գրավոր աղբյուրներում համեմատաբար ուշ վկայություն ունեցող ազգերի վերաբերյալ՝ այսպիսով դառնալով տվյալ ազգի կրկնանուն: Մինևույն էթնիկական միավորի վերաբերյալ կիրառվող մեկից ավելի անվանումները միմյանց նկատմամբ գտնվում են հոմանշային հարաբերության մեջ: Ըստ այդմ՝ ցեղանունների էթնիկական նշանակություններում առանձնացնում ենք հոմանիշների առաջացման հետևյալ պատճառները. **ա.** հոմանիշների առաջացում՝ պայմանավորված տվյալ ազգի համար գործածվող մեկից ավելի անվանումների վկայություններով: Սովորաբար տարանջատվում է ցեղանունների երկու խումբ՝ ինքնանվանումներ (էնդոէթնոնիմ) և արտանվանումներ (էկզոէթնոնիմ): Մինևույն լեզվում այդ երկու անվանումների գործածությունը դրանք դարձնում է հոմանիշներ, հմմտ. *հայ-արմեն, հույն-հելլեն-հոռոմ, պան-օս* և այլն: **բ.** սուրբգրքային նախահոր կամ նախամոր անունից առաջացած կազմությունների՝ տվյալ ցեղանվան փոխարեն կիրառությամբ, հմմտ. *հայ-Ասքանազյան ազգ-Թորգոմյան ազգ-Արամյան ազգ, արար-խմայելացի-Հազարի որդի, հրեա-Իսրայելացի, Եբրայեցի* (Եբեր արական անձնանունից): **գ.** ցեղանվան փոխարեն տվյալ ազգի համար նշանավոր պատմական մի որևէ գործչի (զորավար, առաջնորդ) կամ իշխող դինաստիայի անվան հիման վրա առաջացած կազմությունների կիրառությամբ, հմմտ. *արար-Քաղթական* (Բալիդ իբն Վալիդի անունից): **դ.** պատմիչին ժամանակակից և գործածության մեջ համեմատաբար նոր մուտք գործած ցեղանունը մի հին կամ առավել հայտնի ու լայն տարածում ունեցող ցեղանվամբ կոչելու ավանդույթով, հմմտ. *քուրդ-մար, չաղաթայ-պարսիկ, թուրք-էլամացի-սկյուր:* **ե.** տվյալ ազգի համար գործածվող ցեղանունը մականվամբ փոխարինելով, հմմտ. *հունգարացի-խարսյաշ, թաթար-նետրոլ:* **զ.** տվյալ ցեղանվան փոխարեն նրա բնակության վայրի անվանումից կազմված էթնիկոնի կիրառությամբ, հմմտ. *ռուս-մոսկով:*

2.2.2. Տեղանունների կրոնադավանական նշանակությունները: Ըստ կիրառության՝ ցեղանունները նաև կրոնական-դավանական ցուցիչներ են: Պայմանավորված այն բանով, թե այս կամ այն ազգը, ժողովուրդը ինչ կրոն է դավանում կամ կրոնական ինչ ուղղության է պատկանում, նրան վերաբերող

էթնիկական անվանումը հայ պատմագրության մեջ կարող է գործածվել կրոնադավանական նշանակությամբ, հմմտ. *հրեա* – հուդայական կրոնին պատկանող, *պարսիկ* – զրադաշտական, հետագայում նաև՝ մուսուլման, *հայ* – քրիստոնյա, *քուրդ* – անհավատ, մուսուլման, *թուրք* – մուսուլման, *տաճիկ* – մուսուլման, *հոռոմ*, *օլախ*, *վրացի* - քաղկեդոնական և այլն:

2.2.3. Ցեղանունների հավելական նշանակությունները:

Իմաստային երկրորդական զարգացման արդյունքում ցեղանունները ձեռք են բերում ածականական իմաստ: Հայ պատմագրության մեջ նման կիրառություններ ունեն *խուժ* ցեղանունը, որ գործածվում է վայրենաբարո նշանակությամբ, *սկյութ* – հեթանոս: *Սակ* ցեղանունից առաջացած ձև է *սկայ* բառը, որ նշանակում է «հզոր, հաղթանդամ», որից էլ՝ հսկա բառը: Հաղթանդամ իմաստն է ձեռք բերել նաև *պարթև* ցեղանունը: Պայմանավորված տվյալ ժողովրդի արտաքին հատկանիշներով՝ հասարակ անվան իմաստ են ձեռք բերել *հնդիկ*, *հարաշ* ցեղանունները, որ կիրառվում են «սևամորթ» նշանակությամբ:

2.2.4. Ցեղանունների հատկանվանացումը:

V-XII դարերի հայ պատմագրության մեջ վկայված ցեղանունների մի մասն ավելի ուշ շրջանում կիրառվում են իբրև անձնանուններ:

Քանի որ այս ենթագլուխը հիմնականում ընդգրկում է հիշատակարանների տվյալները, ուստի ժամանակագրական առումով ընդգրկում է V-XVII դարն ընկած ժամանակահատվածում գրված հիշատակարանները:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական աղբյուրներում վկայված ցեղանունների համապարփակ ուսումնասիրությունը հանգեցնում է մասնավորապես հետևյալ եզրակացությունների.

1. Առաջին անգամ հայ մատենագրական նյութի հիման վրա կատարվում է ցեղանունների ամբողջական ուսումնասիրություն:

2. V – XII դդ. հայ պատմագրական աղբյուրներում վկայված է Առաջավոր Ասիայում և անգամ դրանից դուրս երբևէ ապրած ժողովուրդների առավել լիակատար անվանացանկ: Նման հարուստ ցեղանվանական համակարգ թերևս կարելի է գտնել միայն հունահռոմեական և արաբական միջնադարյան աղբյուրներում, ընդ որում, բազում առումներով V – XII դդ. հայկական աղբյուրներում պարունակվող վկայությունները շատ ավելի վստահելի և լիակատար են, քան հիշյալ աղբյուրների նյութը:

3. Ուսումնասիրության ընթացքում վեր են հանվել մի շարք ցեղանուններ, որոնք այլալեզու որևէ այլ աղբյուրում վկայված

չեն: Այդ ցեղանունների ի մոտո քննությունը բացահայտում է դրանց էթնիկական նշանակությունները և տարածքային սահմանները: Դրանցից են, օրինակ, *ափրպափիճ, բահղիճ, բաղասիճ, հեճմափակ, կափիչ* և այլն:

4. Քննության ընթացքում որոշ ցեղանունների համար առաջարկում ենք նոր մեկնություններ: Մասնավորապես կարելի է նշել հյ. **բահղիճ, իժմախ* ցեղանունները:

5. V – XII դդ. հայ պատմագրության մեջ վկայվող ցեղանունների մեծ մասը կրում է իրանական ազդեցության հետքը: Սրանց հիմնական մասը ուղղակի փոխառություն է միջին պարսկերենից ու պարթևերենից, հմմտ. *արի, պարսիկ, հնդիկ, ռաժիկ, սագճիկ, փաճիկ, մար*: Այլ դեպքում իրանական ազդեցության ցուցիչ են *-իճ* և *-ան* վերջածանցները, հմմտ. *ափրպափիճ, բահղիճ, բաղասիճ, քուշան*:

6. Առանձնացված ցեղանունների շարքում թվային առումով իրանականին զիջում են հունական փոխառությունները, հմմտ. *բուլղար, հելլեն, հոռոմ, ունգո, պածիճնակ, սկյութ, վոանգ*:

7. V – XII դդ. հայկական աղբյուրներում ցեղանունների ուսումնասիրության ընթացքում կատարվել են նաև բնագրային ճշգրտումներ: Մասնավորապես X դարի մատենագիր Մեսրոպ Վայոցձորեցու երկում հանդիպող *ուզ* ցեղանունը, որ հիշատակվում է IV դարին վերաբերող դեպքերի համատեքստում, պետք է համարել անախրոնիզմ: Հետագա ընդմիջարկության արդյունք է նաև XII դարի հեղինակ Մխիթար Գոշի երկում «հյուսիսական ազգերի» շարքում *կազակ* անվան առկայությունը: *Կազակ* անվան ձևավորումը տեղի է ունեցել XIV դարից հետո: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մխիթար Գոշի սույն բնագրի ամենավաղ ձեռագիրը վերաբերում է XV դարին, իսկ ամենաուշը՝ XVIII դարին, կարծում ենք, որ այս բառը հետագա ընդմիջարկության արդյունք է:

8. Հայկական աղբյուրներում վկայված ցեղանունները, ըստ կազմության, լինում են մենաբառ՝ պարզ, ածանցավոր, բարդ և բազմաբառ:

9. Հայկական աղբյուրներում վկայված ցեղանունները կազմում են հոմանիշների շարքեր: Այն է՝ մի էթնիկական հանրույթ կարող է բնորոշվել մեկից ավելի անվանումներով: Տվյալ պարագայում այդ բոլոր անվանումները միմյանց նկատմամբ գտնվում են հոմանշային հարաբերության մեջ: Այս երևույթի տիպական օրինակ են հայ ժողովրդի համար կիրառվող *հայ, արմեն* ցեղանունները, ինչպես նաև, *Թորգոմյան, Ասքանազյան ազգ* արտահայտությունները:

Ըստ այդմ՝ առանձնացրել ենք ցեղանունների հոմանշության առաջացման 6 պատճառ, որոնք են՝

ա. հոմանշություն՝ պայմանավորված տվյալ էթնիկական հանրույթին վերաբերող մեկից ավելի անվանումների վկայություններով հայ պատմագրության մեջ,

բ. սուրբգրքային նախահոր կամ նախամոր անունից առաջացած կազմությունների՝ տվյալ ցեղանվան փոխարեն կիրառություններով,

գ. հոմանշություն՝ պայմանավորված տվյալ ազգի համար նշանավոր պատմական մի որևէ գործչի (զորավար, առաջնորդ) կամ իշխող դինաստիայի անվան հիման վրա առաջացած կազմությունների կիրառություններով տվյալ ազգերի համար գործածվող ցեղանունների փոխարեն,

դ. հոմանշություն՝ պայմանավորված հին անունների այժմեականացմամբ,

ե. հոմանշություն՝ պայմանավորված տվյալ ազգի համար գործածվող ցեղանունը մականվամբ փոխարինելով,

զ. հայ պատմագրության մեջ ցեղանունների հոմանշություն է առաջանում նաև այն դեպքում, երբ տվյալ ազգին վերաբերող ցեղանունը փոխարինվում է մի որևէ տեղանունից կազմված և ցեղանվանական կիրառություն ստացած բառով:

10. Ցեղանունների ածականական կիրառությունները, որ հատուկ են բանավոր խոսքին, լայն տարածում ունեն նաև մատենագրական աղբյուրներում: Այդպիսի ցեղանուններից են *տրածիկ* - զավթիչ, ասպատակիչ, նաև՝ արագավազ (ծիու և ուղտի համար), *հնդիկ* - սևամորթ, *քուրդ* - անհավատ և այլ անվանումներ:

11. Ցեղանունները հայկական աղբյուրներում վկայվում են նաև կրոնադավանական իմաստային երանգներով: Այս պարագայում ցեղանունը գործածվում է՝ նշելու համար կրոն, դավանանք: Հայ մատենագրության մեջ նմանատիպ ցեղանուններից են *քուրդ*, *թուրք*, *պարսիկ*, *տրածիկ* - մուսուլման, *վրացի*, որ գործածվում է քաղկեդոնական նշանակությամբ, այդ թվում՝ հայ-քաղկեդոնական, *հրեա* - հուդայական, *ֆրանկ* - կաթոլիկ և այլն:

12. V - XII դդ. հայ պատմագրության մեջ վկայված ցեղանունների մի զգալի մասը դարձել է անձնանուններ, այսինքն՝ հատկանվանացել է: Ընդ որում, ցեղանունները գործածվում են և՛ իբրև արական, և՛ իբրև իգական անձնանուններ: Արական անձնանվան դեպքում ցեղանվանը կցվում է արական սեռին հատուկ զբաղմունքի կամ իշխանական դիրք ցույց տվող հասկացության

անվանում, օր.¹ Քուրդամիր, Քուրդբեկ, Ֆռանգզահ և այլն, իսկ իգական անձնանվան դեպքում՝ իգական, օր.¹ Ֆռանգտիկին, Վրացտիկին, Արմանի խաթուն և այլն: Յեղանվանահիմք անձնանուններն էլ իրենց հերթին, բառակազմական առումով, բաժանվում են պարզ, ածանցավոր և բարդ – հարադրավոր ձևերի:

Ատենախոսության վերաբերյալ հրատարակվել են՝

1. Գևորգյան Հ., Հայ մատենագրության մեջ *մար* ցեղանվան վկայությունների և մեկ տարրընթերցման շուրջ, Բանբեր Մատենադարանի, 20, «Նաիրի», Երևան, 2014, էջ 57-65:

2. Գևորգյան Հ., Հայ մատենագրության մեջ ցեղանվանակազմության ձևերի շուրջ, Արևելագիտության հարցեր, 8, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 357-374:

3. Գևորգյան Հ., Տաճիկ անվան նշանակությունները հայ մատենագրության մեջ, Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ (երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Պատմության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 25-35:

4. Գևորգյան Հ., Յեղանունները հայոց անձնանուններում, Իրան-նամէ, 46, Իրանագիտական կովկասեան կենտրոն, Երևան, 2015, էջ 43-48:

5. Գևորգյան Հ., Յեղանունների կրոնադավանաբանական նշանակությունները հայ մատենագրության մեջ, Ջահուկյանական ընթերցումներ, «Գիտություն», Երևան, 2015, էջ 19-26:

6. Геворгян А., Этноним *kadiš* в армянской историографии, Caucaso-Caspica, выпуск I, труды Института автохтонных народов Кавказско-Каспийского региона, «Изд-во РАУ», Ереван, 2016, с. 301-302.

АЙКАЗ АРМЕНОВИЧ ГЕВОРГЯН

ЭТНОНИМЫ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ (V-XII вв.)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык»

Защита состоится 13 февраля 2017 г. в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Этнонимика как и топонимика и антропонимика, является частью ономастики. Если предметом изучения топонимики и антропонимики являются соответственно топонимы и антропонимы в своей целостности, то объектом исследования этнонимики – это этнонимы в своем историческом развитии (их происхождение, формы и функции).

Этнонимы, свидетельствуемые в армянской историографии, V-XII вв. до сих пор не изучались в полном объеме.

Армянские историографические источники этого периода свидетельствуют о более совершенной номенклатуре народностей, когда либо проживавших в Передней Азии и даже за ее пределами. Подобную богатую этнонимическую систему возможно найти только в грекоримских и арабских средневековых источниках. Надо отметить, что во многих случаях свидетельства, содержащиеся в армянских источниках, являются более надежными, чем в упомянутых источниках.

Данная диссертационная работа по сути является первым в своем роде изучением, которая обобщает этнонимы на основе армянской историографии V-XII вв.

В армянском языке для обозначения этнических единиц, кроме международного термина «этноним», употребляются также собственно армянские слова «ցեղանիւն» (т. е. имя племени) и «ժողովրդանիւն» (имя народа).

В настоящей диссертационной работе термин «этноним» мы принимаем в широком смысле этого понятия, т. е. считаем этнонимами все те имена, которые показывают отдельные этнические единицы, группы, жителей тех или иных местностей, в том числе и

образования из описательных имен, прозвищ, антропонимов, разных прилагательных.

С целью упорядочения работы мы выделили понятия «оригинальные» или «настоящие этнонимы» и имена, которые имеют этнонимическое значение. Согласно этому принципу «настоящие этнонимы» – исторически сложившиеся основные наименования данной этнической единицы (будь они автоэтнонимами или экзоэтнонимами, например: *հայ* - армянин, *ռուս* - россиянин, *սիրի* - перс, *կուրդ* – курд и т. д.).

Соответственно наименования, имеющие значение этнонима это имена, образованные из наименований различных местностей и указывающих на принадлежность к той или иной местности суффиксов, как и из описательно-сочетательных выражений. Сюда могут быть вовлечены также и оскорбительные, унижительные и сатирические выражения, которые образуются на почве враждебности, противопоставления «мы-они» и т. д.

Работа состоит из введения, двух глав с соответствующими разделами, заключения и списка использованной литературы.

В первой главе представлен основной этнонимический корпус армянской историографии V-XII вв. Таким образом было выделено 58 этнонимических единиц (так называемые «настоящие этнонимы»), которые классифицируются по алфавитному порядку. В этой главе рассматривается словообразовательная структура, значение каждого этнонима и представляются соответствия данного термина в других языках.

Вторая глава посвящена изучению словообразования и особенностям смысловых значений этнонимов. В этом разделе, кроме «настоящих этнонимов», изучаются также другие этнонимические формы.

В плане словообразования выделяются однословные и многословные этнонимы. Соответственно однословные этнонимы это те имена, которые выражаются одним словом. Эти имена по структуре бывают а) простые или коренные, б) суффиксальные и в) сложные. Многословные этнонимы состоят из более чем одного слова.

В плане семантического анализа этнонимов, кроме собственно этнонимического значения, выделяем конфессиональное и отэтнонимическое значения. Надо также отметить, что в собственно этнонимическом значении этнонимов выделяется понятие «этнонимическое синонимия», для образования которой мы приводим

шесть причин. В последнем разделе второй главы представляются этнонимические антропонимы.

В последней части диссертации приводятся основные выводы, итоги и заключения диссертации.

HAYKAZ ARMEN GEVORGYAN

THE ETHNONYMS IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY
(V-XII CC.)

Thesis for the PhD of Philology, specialty 10.02.01 “Armenian language”

Defence will be held on 13 February, 2017 at 15⁰⁰ at the session of Specialized Council on Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hr. Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str. 15).

SUMMARY

Ethnonymy is a part of the science of onomastics, as are toponymy and anthroponymy. If the subjects of the study of toponymy or anthroponymy are the names of all places and the names of all human beings respectively, ethnonymy studies ethnonyms, their origins, historical evolution, structure, functions, etc.

Until today there has been no systematic study of ethnonyms in V-XII cc. Armenian historiography. The sources of Armenian historiography of this period cite the more thorough records of nomenclature of the people that have lived in Western Asia or even beyond it. Elaborate ethnonym systems can so far be found only in Greco-Roman and Arab medieval sources, but in many ways, the records contained in Armenian sources are much more reliable and thorough than in the aforementioned sources.

In effect, the current dissertation is the first to conduct a complete study of ethnonyms based on Armenian historiography.

Besides the internationally used term “ethnonym”, ethnic groups are also referred to in the Armenian language with terms of purely

Armenian origin, like «ցեղանուն» (tribe-names) and «ժողովրդանուն» (people-names).

In the current dissertation, we use the term “ethnonym” in its broad meaning, in the sense that we consider as tribe-names all the names that identify individual ethnic units, groups, residents of various types of locales (towns, villages, countries, and various geographic locations), including ethnonymic structures originating from descriptive names, family names, first names, and adjectives.

In order to organize the work and avoid confusion, we have differentiated between “original” or “authentic ethnonyms” and terms that have meaning as ethnonyms.

Accordingly, “authentic ethnonyms” are the historically-formed primary names given to an ethnic unit (be they endo-ethnonyms or exo-ethnonyms, such as *հայ* - *Armenian*, *ռուս* - *Russian*, *պարսիկ* - *Persian*, *քուրդ* - *kurd* etc.).

Correspondingly, terms that have meaning as ethnonyms are those names that originate from place names and are formed with suffixes that show affiliation, as well as phrasal or descriptive expressions formed by various root words (such as the names of male and female ancestors, qualitative words, etc.). These can also include offensive, humiliating and derisive means of expression that are created based on hatred of others, enmity, and the “us-them” separation.

The dissertation consists of an introduction, two sections with their subheadings, conclusions, and a bibliography.

The first section makes an attempt, for the first time through a practical study, to present ethnonyms recorded in V-XII cc. Armenian historiography. Thus we have identified 58 ethnonyms which are listed in alphabetical order.

In this section we analyze the records that mention each ethnonym, the ethnonym's form and composition in the Armenian language, and its correspondence to terms and meanings in other languages, or in other words, which ethnic group is identified by the respective name.

The second section, which is dedicated to the characteristics of word formation and functional meanings of ethnonyms, consists of two subsections that are each divided into small subsections. This section studies "authentic ethnonyms", as well as other structural forms of ethnonyms.

In the context of word formation, we have separated ethnonyms into single-word and multiple-word names. Single-word ethnonyms are those names that are composed of one word, and therefore consist of a) simple or root words, or b) derivative and compound words. Multiple-word ethnonyms are complex words that are composed of a proper name, and simple words representing race or ethnic group.

In the context of functional meaning, besides the ethnic aspect of ethnonyms, we have identified religious and additional meanings. It should be noted that in the ethnic aspects of ethnonyms we have identified the concept of synonymy in ethnonyms, for which we have presented six causes. In the last subheading of the second section we view ethnonyms that form the basis for personal names.

The conclusions of the dissertation are contained in the last section.